Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Մարիանա Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Մանչեսթեր, նոյեմբերի 12-ից 15-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Խորքային երկխոսություն 2024. անդրազգային կրթություն. խորքային հայացք դեպի անդրազգային կրթությունը կանոնակարգող միջավայր և քաղաքականություն» խորագրով միջոցառմանը

6. Քննարկված թեմաները

- բարձրագույն կրթությունը միջազգային դիտանկյունից և վերջինիս զարգացման միտումները,

- բարձրագույն կրթության ազատականացումը և դրա ադեցությունը անդրազգային կրթության վրա,

- փոխադարձ շահի վրա հիմնված կայուն և բարձրակարգ անդրազգային կրթության ապահովում,

- համատեղ միջազգային հավատարմագրում.որակի ապահովման մարտահրավերներ,

- անդրազգային կրթության ոլորտում տվյալների համակարգ,

- անդրազգային կրթության հարմարեցումը տարբեր մշակութային համատեքստերում,

- անդրազգային կրթության ոլորտում Մեծ Բրիտանիայի բուհերի փորձը,

- այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2024 թվականի նոյեմբերի 12-ից 15-ը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ Մարիանա Սարգսյանը Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչության հրավերով մասնակցել է գլոբալ կրթական ծրագրերի շրջանակում Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող «Խորքային երկխոսություն 2024. անդրազգային կրթություն. խորքային հայացք դեպի անդրազգային կրթությունը կանոնակարգող միջավայր և քաղաքականություն» խորագրով միջոցառմանը:

Գլոբալ երկխոսության միջոցառումների շարքն իրականացվում է Բրիտանական խորհրդի կողմից Միացյալ Թագավորության և օտարերկրյա ոլորտային փորձագետների հետ համագործակցությամբ՝ այս տարի ներգրավելով 18 պետությունների բարձրագույն կրթության պետական քաղաքականության մշակման և ոլորտի միջազգայնացման համար պատասխանատու գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Գլոբալ երկխոսության ձևաչափով իրականացվող այս միջոցառման ընթացքում թիրախային քննարկումներ են ծավալվել համաշխարհային մակարդակով բարձրագույն կրթության ոլորտի վրա ազդեցություն ունեցող առանցքային թեմաների շուրջ:

Միջոցառումն ուղղված էր ոլորտը կարգավորող արդիական և կիրառելի իրավական շրջանակների, քաղաքականության, մոտեցումների, մոդելների և ծրագրերի շուրջ տեղեկատվության, տվյալների և փորձի փոխանակմանը՝ կարևորելով անդրազգային կրթության և միջազգայնորեն ճանաչելի որակավորումների վերաբերյալ մատչելի մոտեցումների որդեգրման անհրաժեշտությունը:

Մ. Սարգսյանը ծանոթացել է մի շարք երկրների ներկայացուցչների հետ, մտքեր փոխանակել բարձրագույն կրթության, անդրազգային կրթության, ինչպես նաև բարձրագույն կրթության միջազգայնացման ոլորտներում իրականացվող գործընթացների և զարգացումների մասին:

Մ. Սարգսյանը մասնակցել է պանելային քննարկումներին և խմբային աշխատանքներին: Ամփոփիչ քննարկման փուլում ներկայացրել է այն հիմնական ուղղությունները, որոնք պետք է լինեն անդրազգային կրթության և բարձրագույն կրթության ոլորտի միջազգայնացմանն ուղղված հետագա աշխատանքների հիմքում:

Միջոցառման ընթացքում կայացել են այցեր Սելֆորդի համալսարան և Ակադեմիա 92 համալսարան տեղում անդրազգային կրթության ընձեռած հնարավորություններին ծանոթանալու նպատակով:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Միջոցառման մասնակիցների կողմից նշվեց երկխոսության կարևորությունը և առաջարկվեց շարունակել խորքային քննարկումների շարքը: Բրիտանական խորհուրդը կքննարկի երկխոսության շարունակականության հարցը՝ քննարկումների նոր ձևաչափերի մասին տեղեկությունը փոխանցելով ազգային ներկայացուցչություններին:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչություն ղեկավարի հետ քննարկվել է անդրազգային կրթության ռազմավարության մշակման գործում Բրիտանական խորհրդի կողմից հնարավոր աջակցության հարցը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում առավել մանրամասն քննարկել ռազմավարության մշակման նպատակով միջազգային փորձագետների ներգրավման հարցը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիանա Սարգսյան

20 նոյեմբերի 2024թ.